

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Զ Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» 1995 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-16 օրենքի (այսուհետ՝ օրենք) 13-րդ հոդվածի՝

- 1) 2-րդ մասի 1-ին կետում «երեխա» բառից հետո լրացնել «(զավակ)» բառը.
- 2) 9-րդ մասում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝

«Երդման արարողությանը մասնակցելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր ստանալու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու դեպքում ներկայանում է Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, իսկ օտարերկրյա պետությունում գտնվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ:».

- 3) 11-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքի 17-րդ հոդվածի՝

- 3-րդ և 4-րդ մասերը ճանաչել ուժը կորցրած.
- 5-րդ մասում «հիման վրա» բառերից հետո լրացնել «(14-18 տարեկան երեխայի դեպքում ներկայացվում է նաև երեխայի գրավոր համաձայնությունը)» բառերը:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի`

- 2-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.
- 3-րդ կետում «ազգային անվտանգության» բառերը փոխարինել «պետական անվտանգության» բառերով.
- 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ունի «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված` պետության հանդեպ չկատարված պարտավորություններ` մասնավորապես,

ա) տվյալ տարվա ընթացքում լրանում է արական սեռի քաղաքացու 16 տարին և վերջինս պետք է կատարի զինվորական հաշվառման կանգնելու իր պարտականությունը.

բ) ունենալով զինվորական հաշվառում չի զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության կամ չի հաշվառվել զինված ուժերի պահեստազորում.

գ) հաշվառված է զինված ուժերի պահեստազորում, սակայն ունի օրենքով սահմանված բժշկական վերափորձաքննություն անցնելու պարտականություն.

դ) քաղաքացիության դադարեցման մասին դիմումի քննարկման ժամանակահատվածում ընդգրկված է կազմակերպվող վարժական հավաքներին կամ զինվորական վարժանքներին.

ե) դիմումի քննարկման ժամանակահատվածում հայտարարվել կամ գործում է ռազմական դրության իրավական ռեժիմ.»:

Հոդված 4. 27-րդ հոդվածի

1) 1-ին մասում «դիվանագիտական ներկայացուցչություն» բառերը փոխարինել «դեսպանություն» բառով:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1 մասով.

«3.1. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դիմումների քննարկման ընթացակարգը չի տարածվում ազգությամբ հայերի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու հետ կապված հարաբերությունների վրա: Ազգությամբ հայերի` Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու դիմումների քննարկման արդյունքում Հայաստանի Հանրապետության ոստիկանության կազմած եզրակացությունները երկամսյա ժամկետում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության վարչապետին` առանց Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը ստանալու:».

3) 4-րդ մասում «եզրակացություններն» բառից հետո լրացնել «, իսկ սույն հոդվածի 3.1. կետով նախատեսված դեպքերում` Հայաստանի

Հանրապետության ոստիկանության կազմած եզրակացությունները» բառերը:

Հոդված 5. Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունում «Ժամկետում» բառից հետո լրացնել «,բացառությամբ ազգությամբ հայերի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումների, որոնք քննարկվում են եռամսյա ժամկետում» բառերը:

Հոդված 6. Օրենքի ողջ տեքստում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն» բառերը և դրանց համապատասխան հոլովածները փոխարինել «Հայաստանի Հանրապետության ոստիկանություն» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո: